ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 515-Ա « 06 » ապրիլի 2026 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունվարի 14-ի հ. 161-Ա որոշման 8-րդ հավելվածը (աղյուսակ 1), ինչպես նաև հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի 11.03.2026թ. հ. Ն/14721-26 զեկուցագիրը.

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեով Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) մասով բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժին 1 խմբի 1 դասի «1.Սպորտային միջոցառումների կազմակերպում» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված գումարներից, որպես պարգևատրում հատկացնել 2026թ. հրաձգության Եվրոպայի առաջնությունում առաջին, երկրորդ և երրորդ հորիզոնականներ զբաղեցրած թվով 13 մարզիկներին և հավաքականի մարզչին 7.250.000 /յոթ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումար՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի վրա:

3. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ